

ք. Սևան

16.12.2021թ.

Սույն թվականի դեկտեմբերի 15-ին՝ ժամը 12.00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանում, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, տեղի ունեցավ Միշա Ստեփանյանին պատկանող, ք. Սևան, թերակղզու տարածքի 0.22կվ էլեկտրամատակարարման օդային գծի անցկացման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկում (չորրորդ փուլ)՝ մասնակցությամբ «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյանի, «ՀԷՑ» ՓԲԸ Գեղամա մ/ճ Սևանի տեղամասի ներկայացուցիչ Սուրիկ Քարամյանի, «Սևան» ԱՊ-ի ճարտարագետ Կարեն Բաբայանի, բնապահպան, անկախ փորձագետ Արամ Գալոյանի, Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանի, աշխատակազմի ճարտարապետա-շինարարական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Մեսրոպ Մկրտչյանի, առաջատար մասնագետ Սամվել Թադևոսյանի, ավագանու անդամների, շահագրգիռ անձանց և Միշա Ստեփանյանի:

Հանրային քննարկումը վարեց Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանը:

Նա հայտնեց, որ 1-ին հանրային քննարկումը տեղի է ունեցել դեռևս 2020թ. սեպտեմբեր ամսին, 2-րդ հանրային քննարկումը՝ 2021թ.-ի հուլիսի 15-ին, 3-րդ հանրային քննարկումը՝ 2021թ. հոկտեմբերի 7-ին՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ստացված գրությունների հիման վրա:

Արտահայտվեցին՝

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյան - ՊՈԱԿ-ին է ներկայացվել ք. Սևան, թերակղզու տարածքի 0.22կվ էլեկտրամատակարարման օդային գծի անցկացման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը: Փորձաքննությունն իրականացվել է օրենքի Բ կատեգորիայի ընթացակարգով, քանի որ այն գտնվում է ազգային պարկի տարածքում: Նախատեսվող օդային գիծը գտնվում է ՀԷՑ-ի հաշվեկշռում: Ըստ անհրաժեշտության՝ դրանք կապամոնիտաժվեն: Մեր կողմից կատարված դիտողությունների վրա հաշվետվությունը մշակվել է: Շրջակա միջավայրի վրա իրականացվող աշխատանքները չունեն էական ազդեցություն, կրում են ժամանակավոր բնույթ: Շինաշխատանքները նախատեսված են 28 օր:

Անկախ փորձագետ, բնապահպան Արամ Գալոյան - Ստացված տեխնիկական առաջադրանքի հիման վրա իրականացվել է ՇՄԱԿ ազդեցության գնահատում: Պարզվել է, որ կատարվող աշխատանքները չեն կարող ունենալ էական ազդեցություն: Հենասյունները տեղադրվելու է ճանապարհի եզրին, բետոնային աշխատանքներ չեն նախատեսվում: 0.4 Կվ օդային գիծը 62մ է: Ազդեցությունները օդային ավազանի վրա չնչին են և կարճաժամկետ: Հողային աշխատանքները նախատեսված են 7 օր, հողային հանույթը փոքր ծավալի է: Օդային ավազանի վրա տնտեսական վնասների հաշվարկները ևս չնչին են:

Բուսական, կենդանական աշխարհի վրա ազդեցությունը զրոյական է:

Միաժամանակ էլցանցն էլ պարտավորություն է ստանձնել՝ եթե լինեն արտակարգ իրավիճակներ, պայմանավորված ջրի բարձրությամբ, ապա հենասյունները կտեղափոխվեն:

«Սևան» ԱՊ-ի ճարտարագետ Կարեն Բաբայան - ազգային պարկի ներկայացուցիչներն արդեն կատարել են իրենց դիտողությունները և դրանք հաշվի են առնվել: Այլ առարկություններ չկան: Շինաշխատանքների իրականացման ընթացքում ազգային պարկի ներկայացուցիչները կլինեն տեղում:

«ՀԷՑ» ՓԲԸ Գեղամա մ/ճ Սևանի տեղամասի ներկայացուցիչ Ս. Քարամյան - քաղաքացի Մ. Ստեփանյանը դիմել է էլցանցի Սևան տեղամաս, նրա կողմից ստացված հայտը ստացել է համապատասխան ընթացք, կազմվել է նախագիծ: Քանի որ Ստեփանյանին պատկանող տարածքը գտնվում է «Սևան» ազգային պարկի հատուկ պահպանվող տարածքում, անհրաժեշտություն է առաջացել հանրային քննարկումներ կազմակերպելու: Արդեն կատարվել են համապատասխան դիտողություններ, դիտողությունների արդյունքում իրականացվել են շտկումներ: Խնդիրների առաջացման դեպքում էլցանցն իր միջոցներով կկատարի հենասյունների տեղափոխում:

2 հենասյուն տեղադրելու մասով չի կարող լինել մեծ ազդեցություն, քանի որ ծավալուն շինարարական աշխատանքներ նախատեսված չեն. պետք է կատարվի լիցք, և սյուները տեղադրվեն: Միաժամանակ նշեց, որ էլեկտրամատակարարումը հասնելու է մինչև տարածք, ինչպես նշված է նախագծային աշխատանքներում: Հոսանքը միացվելու է գործող գծից: Միշտ Ստեփանյանը բաժանորդ է, և ընկերությունն իրականացնելու է իր հասանելիք աշխատանքը:

Հանրային 4-րդ քննարկման ընթացքում դիտողություններ կամ առարկություններ չարձանագրվեցին:

Նախաձեռնող՝

Նիստը վարող և քննարկումների պատասխանատու՝

Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Ա. Ղուկասյան

Արձանագրող՝

Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Ղուկասյան